



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2019 թ.

«Ֆակտոր տեղեկատվական կենտրոն»
ՀԿ-ի լրագրող
Նարեկ Կիրակոսյանին
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 42, բն.23
Էլ. փոստ՝ info@factor.am

Ի պատասխան Ձեր 09.12.2019թ.-ի գրությանը

Հարգելի պարոն Կիրակոսյան

2019 թվականի պետական բյուջեով ՀՀ Լոռու մարզպետարանին «Պարզևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով հատկացված է 93190.5 հազ. դրամ: Նշված գումարից առաջին եռամսյակում հատուկ առաջադրանքները և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար աշխատակազմի աշխատակիցները պարզևատրվել են ապրիլ ամսին: Որից հետո մայիս ամսից սկսած վճարումները կատարվել են յուրաքանչյուր ամիս՝ բյուջեով նախատեսված գումարներին համապատասխան:

Պարզևատրումները վճարվել են աշխատակիցներին ոչ հավասարաչափ, հաշվի են առնվել նրանց աշխատանքային ծանրաբեռնվածությունը և տրված հանձնարարականների կատարման արդյունավետությունը: Պարզևատրման չափը կազմել է հիմնականում աշխատողների դրույքաչափի 20-30 տոկոսի սահմաններում: Սակայն կան դեպքեր, երբ հաշվի առնելով հանձնարարականների կատարման ցածր արդյունավետությունը մի շարք աշխատակիցներ տվյալ ամիս չեն պարզևատրվել, կամ պարզևատրվել են 5-10 տոկոսի չափով: Բացառիկ դեպքերում հանձնարարականների կատարման բարձր արդյունավետությամբ և ծանրաբեռնվածությամբ պայմանավորված որոշ աշխատակիցներ պարզևատրվել են 40-100 տոկոսի չափով: Պարզևատրվել են մարզպետարանի բոլոր աշխատակիցները, թվաքանակը պարբերաբար փոփոխվել է և կազմում է 127-135 աշխատակից:

2019 թվականին պետական բյուջեից ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացված «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարզևատրում» հոդվածով նախատեսված գումարների հաշվին մարզպետարանի **քաղաքացիական ծառայողները** համաձայն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի կիսամյակի կատարողականների արդյունքների հիման վրա պարզևատրվել են նաև հունվար և հուլիս ամիսները: Վերը

Նշված հողվածով կատարված ծախսը կազմում է 36890.7 հազ. դրամ: Հունվարին պարգևատրվել է 98 աշխատակից, հուլիսին՝ 110 աշխատակից: Պարգևատրման չափը կապված կիսամյակի կատարողականի գնահատման տատանվում է դրույքաչափի 60-85 տոկոսի սահմաններում: Նշված պարգևատրումը քաղաքացիական ծառայողներին վճարվում է դեռևս 2002 թվականից:

Հարգանքով՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ